ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

« » հոկտեմբերի 2018 թ. N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ԱՐԱ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սաղաթելյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Վիճակախաղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի (Պ-358-24.08.2018-ՏՀ-011/0 և Պ-358[1]-24.08.2018-ՏՀ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հոկտեմբերի 1-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1262 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

ՎԻՃԱԿԱԽԱՂԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ, ԻՆՏԵՐՆԵՏ ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ ԵՎ ԽԱՂԱՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ (Պ-358-24.08.2018-ՏՀ-011/0 ԵՎ Պ-358[1]-24.08.2018-ՏՀ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը կիսում է ներկայացված օրենքների նախագծերի փաթեթի հեղինակների մտահոգությունը և կարևորում է առաջարկվող հարաբերությունների կարգավորման անհրաժեշտությունը: Այնուամենայնիվ նախագծերի փաթեթի վերաբերյալ ներկայացնում ենք Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները:

«Վիճակախաղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ.

1) նախագծի 1-ին հոդվածով լրացվող դրույթի համաձայն տոտալիզատորի կազմակերպիչներին իրավունք է տրվում, բացի վիճակախաղերի կազմակերպման գործունեությունից, զբաղվելու նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված գործունեության ցանկացած այլ տեսակով:

Համաձայն «Վիճակախաղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 5-րդ կետի՝ տոտալիզատորը նույնպես վիճակախաղ է: Ներկայումս գործող օրենսդրության համաձայն առևտրային կազմակերպությունները վիճակախաղերի կազմակերպման լիցենզիայի հիման վրա կարող են իրականացնել թե՛ վիճակախաղերի, և թե՛ տոտալիզատորի կազմակերպման գործունեություն: Ուստի աննպատահարմար է այդ գործունեությունների նկատմամբ մոտեցումների տարանջատումը:

Այդ կապակցությամբ առաջարկում ենք նշված հոդվածը խմբագրել՝ նախատեսելով, որ վիճակախաղերի կազմակերպիչներին իրավունք է տրվում բացի վիճակա-

խաղերի կազմակերպումից զբաղվել նաև ինտերնետ շահումով խաղերի կազմակերպման, ծրագրային ապահովման և դրա սպասարկման ծառայությունների մատուցման գործունեություններով, կազմակերպչի աշխատակիցների համար և տոմսերի վաճառքի կետերում հանրային սննդի կազմակերպման գործունեության կազմակերպմամբ: Անհրաժեշտ ենք համարում նաև սահմանել տարեկան պետական տուրքի չափով ֆինանսական երաշխիքի առկայության պահանջ, որը կապահովի շահումային ֆոնդի խաղարկությունների ամբողջ ընթացքը և ուղղված կլինի մասնակիցների շահերի պաշտպանության ապահովմանը: Պետք է նաև սահմանել ֆինանսական երաշխիքի նկատմամբ պահանջներ, որոնք ուղղված կլինեն վիճակախաղի մասնակիցների շահերի պաշտպանությանը:

Բացի դրանից, նախագծի 1-ին և 2-րդ հոդվածներով նախատեսված դրույթներն անհրաժեշտ է միավորել մեկ հոդվածում:

Նշված հիմնավորումներով առաջարկում ենք նախագծի 1-ին հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 1. «Վիճակախաղերի մասին» 2003 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-3-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 5-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի «ը» կետում «միայն» բառը փոխարինել «ինտերնետ շահումով խաղերի կազմակերպման, ծրագրային ապահովման և դրա սպասարկման ծառայությունների մատուցման գործունեություններով, կազմակերպչի աշխատակիցների համար և տոմսերի վաճառքի կետերում հանրային սննդի կազմակերպման գործունեությամբ, ինչպես նաև» բառերով.

2) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «ժդ» կետով.

«ժդ) լիազոր մարմնի սահմանած կարգով ստուգում է խաղասրահ մուտք գործել ցանկացող ֆիզիկական անձի անձնագիրը կամ անձը հաստատող այլ փաստաթուղթ, որը պարունակում է տվյալներ նրա տարիքի վերաբերյալ.».

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր մասով.

«1.1. Ապահովում է տարեկան պետական տուրքի չափով ֆինանսական երաշխիքի առկայություն, որն ապահովում է շահումային ֆոնդի խաղարկությունների ամբողջ ընթացքը և ուղղված է մասնակիցների շահերի պաշտպանության ապահովմանը: Ֆինանսական երաշխիքը կարող է օգտագործվել միայն վիճակախաղի կազմակերպչի սահմանված և լիազոր մարմնի հետ համաձայնեցված կանոնակարգին համապատասխան վիճակախաղի շահող մասնակիցների և պետության հանդեպ ունեցած պարտավորությունների կատարման նպատակով:

Սույն օրենքի իմաստով ֆինանսական երաշխիք է համարվում բանկի կամ ապահովագրական կազմակերպության կողմից տրված երաշխիքը:».

2) նախագծի 2-րդ հոդվածով կատարվող լրացումով պայմանավորված անհրաժեշտ է գործող օրենքի 2-րդ հոդվածում սահմանել «խաղասրահ» հասկացությունը, հետևյալ բովանդակությամբ.

«Խաղասրահ՝ շինության ներսում այն տարածքը, որտեղ կազմակերպվում և անցկացվում են վիճակախաղեր կամ ուղղակի հնարավորություն է ստեղծվում մասնակցել վիճակախաղին:».

3) նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 5.2-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պատասխանատվության միջոցների կիրառումն ապահովելու նպատակով անհրաժեշտ է այն նախատեսել գործող օրենքի 15-րդ հոդվածում.

4) նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 5.3-րդ հոդվածով առաջարկվում է հանրային նշանակության օբյեկտներ շահագործող անձանց պարտավորեցնել արգելափակելու Հայաստանի Հանրապետության տարածքում վիճակախաղի կազմակերպման լիցենզիա ստացած անձանց պաշտոնական կայքերի հասանելիությունը: Նախատեսվում է նաև վարչական պատասխանատվություն վերոգրյալ պահանջը չպահպանելու դեպքում: Փաստորեն, նշված սահմանափակումները չեն տարածվում օտարերկրյա պետություններում կազմակերպված վիճակախաղերի կազմակերպիչների պաշտոնա-

կան կայքերին, որոնք հասանելի են Հայաստանի Հանրապետության տարածքում: Գտնում ենք, որ նման մոտեցումը՝

ա. կբերի Հայաստանի Հանրապետության տարածքում չգրանցված կազմակերպությունների կողմից առաջարկվող նմանօրինակ կայքերի Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող օգտատերերի ավելացմանը, ինչը կհանգեցնի անհավասար մրցակցային դաշտի ստեղծմանը և Հայաստանի Հանրապետությունում լիցենզիա ունեցող կազմակերպիչների իրավական և ֆինանսական վիճակի վատթարացմանը,

բ. հանրային նշանակության օբյեկտներում վիճակախաղերի կազմակերպիչների պաշտոնական կայքերի արգելափակման համար անհրաժեշտ կլինի գործարկել խիստ մեխանիզմներ (տվյալների կոդավորված հոսքի արգելափակում, վիրտուալ շղթաների սահմանափակում, փաթեթների խորը հետազոտություն – Deep Packet Inspection)՝ սահմանափակ քանակի կայքերին հասանելիության արգելափակման համար, ընդ որում, սահմանափակման եղանակների լիակատար կիրառումը կզրկի Հայաստանի Հանրապետության օգտվողներին ինտերնետային այլ աղբյուրների հասանելիությունից:

Միաժամանակ այն լրացուցիչ բեռ կհանդիսանա տնտեսվարող սուբյեկտների համար, մասնավորապես, անհրաժեշտություն է առաջանալու որպեսզի համապատասխան մասնագետի կողմից պաշպանիչներ կամ ֆիլտրներ տեղադրվեն, կամ վերջիններիս կողմից չպետք է տրամադրվի ինտերնետից օգտվելու հնարավորություն:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ սահմանափակումների դեպքում օգտվողներն անցում են կատարում դեպի «Մութ ինտերնետ» (Darknet), որտեղ օգտվողների որևէ վերահսկում չկա. լայնորեն ներկայացված է թմրամոլությունը, շահումով խաղերը, հանցավոր խմբերին միանալու քարոզչությունը և այլ նմանատեսակ վտանգներ: Օգտվողներն անցում կկատարեն օրինակ՝ Facebook-ում ներկայացված շահումով խաղերին, ինչը կպահանջի արգելափակել հասանելիությունը ամենախոշոր սոցիալական ցանցին:

Արգելափակող սարքավորումների կիրառման հետևանքով հասանելիության սահմանափակումները կտարածվեն ոչ միայն շահումով խաղերի, այլև տեղեկատվության հասանելիության վրա:

Հաշվի առնելով վերոգրյալը, առաջարկվող փոփոխությունն իր հետ կբերի նաև լրացուցիչ ֆինանսական բեռ՝ ինչպես կապի օպերատորների, այնպես էլ տնտեսվարող սուբյեկտների համար՝ հանգեցնելով էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների սակագների աճին,

գ. առաջարկվող կարգավորումը չի ծառայի նպատակին, քանի որ նմանատիպ ծառայություններից քաղաքացիները կարող են օգտվել Հայաստանի Հանրապետության տարածքում, բայց այլ երկրներում գրանցված տնտեսվարողների կայքերի միջոցով:

Անհրաժեշտ է ներկայացված առաջարկությունները քննարկել օրենսդրական կարգավորումների պրակտիկ իրացման տեսանկյունից՝ հաշվի առնելով վերոշարադրյալը:

Նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 5.3-րդ հոդվածի 2-րդ մասով կատարվող լրացումից պարզ չէ, թե որ պետական մարմինն է իրականացնելու վերահսկողություն՝ նշված պահանջն ապահովելու և պատասխանատվության միջոցներ կիրառելու նպատակով:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ առաջարկում ենք նախագիծը խմբագրել՝ հանել 3-րդ հոդվածով լրացվող 5.3-րդ հոդվածը.

5) նախագծի 5-րդ հոդվածի համաձայն նախագիծն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հոկտեմբերի 1-ից: Մինչդեռ, «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն լիցենզիայի պայմանների ու պահանջների այնպիսի փոփոխությունը, որը սահմանափակում է լիցենզավորված անձի իրավունքները կամ նրա համար նախատեսում է նոր պարտականություններ, ուժի մեջ է մտնում համապատասխան փոփոխությունը հրապարակելուց ոչ շուտ, քան 6 ամիս հետո: Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք նախագծի 5-րդ հոդվածում «2019 թվականի հոկտեմբերի 1-ից» բառերը փոխարինել «հրապարակումից 6 ամիս հետո» բառերով:

«Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ.

«Վիճակախաղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ 4-րդ կետով նշված դիտարկումները վերաբերում են նաև «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծին: Ուստի առաջարկում ենք փաթեթից հանել «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1 հոկտեմբերի 2018 թվականի N 1262 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Կարեն Թամազյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Վիճակախաղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը (Պ-358-24.08.2018-ՏՀ-011/0) քննարկելիս կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2018 թ. հոկտեմբերի 1
Երևան

ՆԱԽԱԳԻԾ

Պ-358-24.08.2018-ՏՀ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՎԻՃԱԿԱԽԱՂԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Վիճակախաղերի մասին» Հայաստանի Հանրապետության 2003 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-3-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի «ը» ենթակետում «գործունեությամբ» բառից հետո դնել ստորակետ եւ ավելացնել «բացառությամբ տոտալիզատորի, որի կազմակերպիչն իրավունք ունի զբաղվելու ՀՀ օրենսդրությամբ չարգելված գործունեության ցանկացած այլ տեսակով:» բառերը:

Հոդված 2. Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ «ժդ» կետով. «ժդ) լիազոր մարմնի սահմանած կարգով ստուգում է խաղասրահ մուտք գործել ցանկացող ֆիզիկական անձի անձնագիրը կամ անձը հաստատող այլ փաստաթուղթ, որը պարունակում է տվյալներ նրա տարիքի վերաբերյալ.»:

Հոդված 3. Օրենքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 5.1 - 5.3 - րդ հոդվածներով.

«*Հոդված 5.1. Մոլեխաղերով հրապուրվելու հետեւանքով իր ընտանիքը նյութական ծանր դրության մեջ դնելու հիմքով սահմանափակ գործունակ ճանաչված քաղաքացու՝ տոտալիզատորին (այդ թվում ինտերնետ տոտալիզատորին) մասնակցությունը սահմանափակելու կարգը*

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 29-րդ գլխով սահմանված կարգով՝ մոլեխաղերով հրապուրվելու հետեւանքով իր ընտանիքը նյութական ծանր դրության մեջ դրած քաղաքացու գործունակությունը սահմանափակվելու դեպքում վճիռ կայացրած դատարանը վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ եռօրյա ժամկետում, վճռի օրինակն ուղարկում է լիազոր մարմին:

2. Լիազոր մարմինը վճիռն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, վճռի մասին տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող տոտալիզատորների (այդ թվում ինտերնետ տոտալիզատորների) բոլոր կազմակերպիչներին՝ նրանց ուղարկելով վճռի էլեկտրոնային կամ պատճենահանված օրինակը, որպեսզի նրանք արգելեն օրինական ուժի մեջ մտած վճռով մոլեխաղերով հրապուրվելու հետեւանքով իր ընտանիքը նյութական ծանր դրության մեջ դնելու հիմքով սահմանափակ գործունակ ճանաչված անձի մուտքն իրենց խաղասրահներ, ինչպես նաեւ գրանցումը ինտերնետ տոտալիզատորի կազմակերպման համար նախատեսված ինտերնետային կայքում, իսկ գրանցված լինելու դեպքում՝ ինտերնետ տոտալիզատորին մասնակցելու հնարավորությունը:

3. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանի կողմից քաղաքացու գործունակության սահմանափակումը վերացվելու դեպքում դատարանի վճիռն ուղարկվում է լիազոր մարմին՝ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված կարգով:

4. Սույն հոդվածի 1-ին մասով նշված քաղաքացիների կողմից կնքված գործարքները շահագրգիռ անձանց պահանջով դատարանը կարող է անվավեր ճանաչել:

5. Սույն հոդվածի 1-ին մասով նշված քաղաքացիների վերաբերյալ տվյալների բազայի վարման կարգը սահմանում է լիազոր մարմինը:»:

«*Հոդված 5.2. Վիճակախաղի կազմակերպմանը ներկայացվող տարածքային պահանջները*

1. Անմիջականորեն (խաղասրահի միջոցով) տոտալիզատոր եւ/կամ ավտոմատացված՝ սարքավորումների միջոցով վիճակախաղ (ոչ խաղարկությունով, խաղարկությունով, համակցված, տոտալիզատոր) կարող է կազմակերպվել միայն Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի վարչական սահմաններում, Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի վարչական սահմաններում,

Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքի վարչական սահմաններում, Սյունիքի մարզի Մեղրի համայնքի վարչական սահմաններում՝ կրթական եւ պատմամշակութային օջախներից, պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերից, հիվանդանոցներից Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած հեռավորությամբ եւ չափանիշներին համապատասխան տարածքներում:

2. Արգելվում է տոտալիզատորի մասնակիցների հաշիվներին դրամական միջոցներ մուտքագրել եւ ելքագրել կանխիկ եղանակով, բացառությամբ անմիջականորեն (խաղասրահի միջոցով) տոտալիզատորի կազմակերպման դեպքի: Նշված հաշիվները համալրվում են եւ հաշիվներից գումարը կանխիկացվում է միայն ՀՀ եւ ՀՀ տարածքից դուրս գործող վճարահաշվարկային կազմակերպությունների միջոցով:

3. Սույն հոդվածի 1-ին մասի պահանջի խախտման դեպքում կիրառվում են սույն օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պատասխանատվության միջոցները:»:

«*Հոդված 5.3. Հանրային նշանակության օբյեկտներում վիճակախաղերի կազմակերպիչների պաշտոնական կայքերի հասանելիության արգելափակումը.*

1. Հանրային նշանակության օբյեկտները (սրճարան, բար, ռեստորան, հյուրանոց, ինտերնետ ակումբ (սրահ), գազալցակայան, առեւտրի սրահ, զվարճանքի եւ հանրային սպասարկման այլ վայրեր) շահագործող անձինք պարտավոր են արգելափակել ՀՀ տարածքում վիճակախաղի կազմակերպման լիցենզիա ստացած անձանց պաշտոնական կայքերի՝ համապատասխան սարքավորումներով հասանելիությունը:
2. Սույն հոդվածով սահմանված պահանջի խախտումը առաջին անգամ առաջացնում է տուգանք մեկ միլիոն ՀՀ դրամի չափով՝ խախտման յուրաքանչյուր դեպքի համար: Առաջին խախտումը հայտնաբերելու օրվանից մեկ տարվա ընթացքում երկրորդ անգամ խախտումը հայտնաբերելու դեպքում առաջացնում է տուգանք երեք միլիոն ՀՀ դրամի չափով՝ խախտման յուրաքանչյուր դեպքի համար, իսկ առաջին անգամ խախտումը հայտնաբերելու օրվանից երկու տարվա ընթացքում երրորդ անգամ՝ խախտման յուրաքանչյուր դեպքի համար՝ հինգ միլիոն ՀՀ դրամի չափով:

Հոդված 4. Օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ «ե2» կետով.
«ե2) խախտել է սույն օրենքի 5.1-ին հոդվածով սահմանված պահանջները՝ խախտման յուրաքանչյուր դեպքի համար՝ հինգ հարյուր հազար դրամի չափով.»:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հոկտեմբերի 1-ից: Սույն օրենքի պաշտոնական հրապարակման պահից երեք ամսվա ընթացքում լիազոր մարմինը սահմանում է խաղասրահ մուտք գործել եւ ինտերնետային կայքում գրանցվել ցանկացող ֆիզիկական անձի անձնագիրը կամ անձը հաստատող այլ փաստաթուղթն ստուգելու կարգը եւ սույն օրենքի 5?1 հոդվածի 1-ին կետով սահմանված քաղաքացիների վերաբերյալ տվյալների բազայի վարման կարգը:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-358[1]-24.08.2018-ՏՀ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ, ԻՆՏԵՐՆԵՏ ՇԱՀՈՒՄՈՎ ԽԱՂԵՐԻ ԵՎ ԽԱՂԱՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի եւ խաղատների մասին» Հայաստանի Հանրապետության 2003 թվականի դեկտեմբերի 13-ի ՀՕ-1-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 4-րդ մասով.

«4) Հանրային նշանակության օբյեկտները (սրճարան, բար, ռեստորան, հյուրանոց, ինտերնետ ակումբ (սրահ), գազալցակայան, առեւտրի սրահ, զվարճանքի եւ հանրային սպասարկման այլ վայրեր) շահագործող անձինք պարտավոր են արգելափակել ՀՀ տարածքում ինտերնետ շահումով խաղերի կազմակերպման լիցենզիա ստացած անձանց պաշտոնական կայքերի հասանելիությունը:»:

Հոդված 2. Օրենքի 13-րդ հոդվածը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 5-րդ մասով.

«5) Սույն օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված պահանջի խախտումն առաջացնում է տուգանք՝ արգելափակման ենթակա կայքերի հասանելիություն ունեցող յուրաքանչյուր սարքավորման համար՝ մեկ միլիոն ՀՀ դրամի չափով:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հոկտեմբերի 1-ից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՎԻՃԱԿԱԽԱՂԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Վիճակախաղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով սահմանվում է, որ անմիջականորեն (խաղասրահի միջոցով) տոտալիզատոր եւ ավտոմատացված՝ սարքավորումների միջոցով վիճակախաղ կարող է կազմակերպվել միայն Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի վարչական սահմաններում, Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքի վարչական սահմաններում, Վայոց Ձորի մարզի Ջերմուկ համայնքի վարչական սահմաններում, Սյունիքի մարզի Մեղրի համայնքի վարչական սահմաններում:

Ներկայումս անմիջականորեն (խաղասրահի միջոցով) տոտալիզատորի եւ ավտոմատացված՝ սարքավորումների միջոցով վիճակախաղի կազմակերպումն իրականացվում է ՀՀ ողջ տարածքում: Ընդ որում՝ խաղասրահի միջոցով տոտալիզատորների գերակշիռ մասը տեղակայված է բնակավայրերի մարդաշատ վայրերում:

Այս փաստը բացասական ազդեցություն է թողնում հասարակության վրա՝ տոտալիզատորով հրապուրվելու վտանգ ստեղծելով:

Նախագիծը մշակվել է՝ ելնելով տարածքային համաչափ զարգացման ռազմավարությունից եւ «Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի եւ խաղատների մասին» ՀՀ օրենքով կիրառված տարածքային սահմանափակումներից: Նախագիծը սահմանում է այն վայրերը, որտեղ կստեղծվեն վիճակախաղերի (տոտալիզատորի) եւ ավտոմատացված սարքավորումների միջոցով կազմակերպվող վիճակախաղի կազմակերպման կլաստերներ՝ աջակցելով տվյալ համայնքների զարգացմանը: Համայնքներն ընտրվել են զբոսաշրջային եւ հանգստի անցկացման ուղղվածություն ունենալու, իսկ Մեղրիի դեպքում՝ սահմանամերձ համայնք հանդիսանալու չափանիշով:

Թեեւ վիճակախաղի կազմակերպումը Եվրոպական Միության կողմից ճանաչված է որպես տնտեսական գործունեության տեսակ եւ ինքնին վիճահարույց չէ օրինականության տեսանկյունից, այնուամենայնիվ, այն որոշակիորեն զգայուն ոլորտ է՝ հատկապես ՀՀ բնակչության սոցիալական վիճակը հաշվի առնելով:

Վիճակախաղով հրապուրված անձանց կողմից հնարավոր են դեպքեր, որ այդպիսի անձիք իրենց եւ իրենց ընտանիքներին հասցնեն նյութական ծանր դրության:

Նախագիծը նպատակ է հետապնդում սահմանափակել քաղաքացիների՝ վիճակախաղերով տարվելու (հրապուրվելու) անմիջական հնարավորությունը:

Հենց այդ պատճառով անմիջականորեն (խաղասրահի միջոցով) տոտալիզատորի եւ ավտոմատացված՝ սարքավորումների միջոցով վիճակախաղերի կազմակերպումն արգելվում է ՀՀ ողջ տարածքում, բացառությամբ Ծաղկաձոր, Սեւան, Ջերմուկ, Մեղրի քաղաքների:

Նույն նկատառումով սահմանվում է նաեւ տոտալիզատորի մասնակիցների հաշիվներին դրամական միջոցներ մուտքագրելու եւ ելքագրելու հնարավորություն միայն վճարահաշվարկային համակարգերի միջոցով, բացառությամբ վերոգրյալ համայնքներում խաղասրահի միջոցով տոտալիզատորի կազմակերպման դեպքերի:

Սրա արդյունքում տոտալիզատորին մասնակցելու համար քաղաքացին մի կողմից պետք է կատարի որոշակի գործողություններ՝ համացանցի միջոցով բացի խաղային հաշիվ, վճարահաշվարկային համակարգի միջոցով լիցքավորի հաշիվը, որն ավելի ժամանակատար գործընթաց է եւ հնարավորություն է տալիս, որպեսզի անձը, վիճակախաղին մասնակցելուց առաջ, ավելի երկար մտորի իր որոշման եւ դրա հետեւանքների մասին:

Մյուս կողմից, պահի ազդեցության տակ վիճակախաղին մասնակցելու շարժառիթն այլեւս վերանում է: Օրինակ՝ անձը, ով ֆինանսական դժվարություններ ունի, կարող էր պահի ազդեցության տակ որոշել մասնակցել վիճակախաղին շահելու ակնկալիքով եւ, ինչը պակաս

կարեւոր չէ, անմիջականորեն խաղասրահում վիճակախաղին մասնակցելու դեպքում շահումը անմիջապես կանխիկացնելու հնարավորությունը հաշվի առնելով: Այդպիսի հնարավորությունն այլեւս հասանելի չի լինի, բացառությամբ Ծաղկաձոր, Սեւան, Ջերմուկ, Մեղրի համայնքների:

Դրանից բացի, նախագծով սահմանվում է այն կառուցակարգը, որը հնարավորություն է ընձեռելու մոլեխաղերով հրապուրվելու հետեւանքով իրեն եւ իր ընտանիքին նյութական ծանր վիճակի հասցրած անձի՝ հետագայում նման գործողություններ կատարելու հնարավորությունն օրինական կարգով սահմանափակել: Խոսքն այն անձանց մասին է, ովքեր արդեն իսկ դատական կարգով սահմանափակ գործունակ են ճանաչվել վերոնշյալ հիմքերով:

Այդ նպատակով նախագիծը սահմանում է, որ մոլեխաղերով հրապուրվելու հետեւանքով իր ընտանիքը նյութական ծանր դրության մեջ դրած քաղաքացու գործունակությունը սահմանափակվելու դեպքում վճիռ կայացրած դատարանը վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո՝ եռօրյա ժամկետում, վճռի օրինակն ուղարկում է լիազոր մարմին, որը վճիռը ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, վճռի մասին տեղեկացնում է ՀՀ տարածքում գործող տոտալիզատորների բոլոր կազմակերպիչներին, որպեսզի կազմակերպիչներն արգելեն օրինական ուժի մեջ մտած վճռով մոլեխաղերով հրապուրվելու հետեւանքով իր ընտանիքը նյութական ծանր դրության մեջ դնելու հիմքով սահմանափակ գործունակ ճանաչված անձի մուտքն իրենց խաղասրահներ:

«Վիճակախաղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ վիճակախաղին մասնակցելու իրավունք ունեն միայն 18 տարեկանը լրացած անձինք, բացառությամբ տոտալիզատորի, որին մասնակցելու իրավունք ունեն միայն 21 տարեկանը լրացած անձինք, ինչն ինքնին նշանակում է, որ խաղասրահ մուտք գործելիս անհրաժեշտ է անձը հաստատող փաստաթուղթ ներկայացնել: Այսպիսով՝ ստուգելով խաղասրահ մուտք գործել ցանկացող ֆիզիկական անձի տարիքը, ստուգվում է նաեւ, թե նա կա՞ արդյոք այն անձանց ցուցակում, ում մուտքը խաղասրահ վերոնշյալ հիմքերով պետք է արգելվի:

Այդ նպատակով լիազոր մարմինը սահմանում է նաեւ խաղասրահ մուտք գործել ցանկացող ֆիզիկական անձի անձնագիրը կամ անձը հաստատող այլ փաստաթուղթը ստուգելու կարգը եւ խաղասրահ մուտք գործելու իրավունք չունեցող անձանց վերաբերյալ տվյալների բազայի վարման կարգը:

Այսպիսով՝ նախագծով առաջարկվում է սահմանել, որ մոլեխաղերով հրապուրվելու հետեւանքով իր ընտանիքը նյութական ծանր դրության մեջ դրած քաղաքացուն սահմանափակ գործունակ ճանաչելու դեպքում նրա մուտքը խաղասրահ արգելվում է, սահմանվում է այդ նորմի կիրառման կարգը, ինչպես նաեւ նախատեսվում է վարչական պատասխանատվություն վերոգրյալ պահանջը տոտալիզատորի կազմակերպիչների կողմից չպահպանելու դեպքում:

Նախագծով առաջարկվում է նաեւ հանրային նշանակության օբյեկտներ շահագործող անձանց պարտավորեցնել արգելափակել ՀՀ տարածքում վիճակախաղի կազմակերպման լիցենզիա ստացած անձանց պաշտոնական կայքերի հասանելիությունը:

Վերջին շրջանում տեղեկատվական տեխնոլոգիաների արագընթաց զարգացումը հանգեցրել է հասարակության լայն շերտերի ներգրավմանը նախկինում ոչ այնքան հասանելի ոլորտներ, ինչպիսին է վիճակախաղի ոլորտը: Դա առաջ է բերում պետական վերահսկողական լրացուցիչ գործիքակազմի անհրաժեշտություն:

Հանրային նշանակության օբյեկտները, մեծամասամբ ապահովված լինելով այցելուների օգտագործման համար նախատեսված ինտերնետ կապի միջոցներով, անուղղակի կերպով նպաստում են վիճակախաղի տարածմանը եւ զարգացմանը:

Ներկա պայմաններում, հաշվի առնելով հասարակության բավականին լայն շերտերի, հատկապես անչափահասների շարժը նմանատիպ՝ հիմնականում ժամանցային օբյեկտներ, առաջանում է քաղաքացու եւ հատկապես անչափահասների՝ որպես առավել խոցելի խմբի՝ վիճակախաղերով հրապուրվելու ռիսկը չեզոքացնելու խնդիր: